



N 22-39
14.06.2022

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Կարեն Անդրեասյանին.

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Անդրեասյան,

ՀՀ ԱՆ ֆրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները (այսուհետ՝ խումբ) ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՂ կատարած այցելության ժամանակ առանձնազրույց են ունեցել ազատությունից զրկված մի քանի անձանց հետ.

1. Գլուրգ խաչատրյան


Գլուրգ խաչատրյանը գտնվում էր հացադուլի մեջ: Խմբի անդամներին Գլուրգ խաչատրյանը հայցնել է, որ հայտարարել է հացադուլ՝ 2022թ-ի մայիսի 16-ից՝ կապված բուժապաստիման հետ: Մինչ հացադուլ հայտատարելը կռուել է 69 կգ, իսկ այցի պահին 60.8 կգ էր:

Սկզբում եղել է բուժմատում, եղբոր հետ նույն խցում, վերջինս հոգացել է իր խնամքը, այնուհետև առողջական խնդիրների սրացման պատճառով տեղափոխել են ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՂ, որտեղ բուժում ստանալուց հետո վերադարձել է: Իր փոխանցմամբ նշանակվել է ՄՌՏ հետազոտություն, սակայն ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՂ-ում չեն կատարել, հայտնելով, որ հետազոտությունը պետք է կազմակերպվի ՀՀ ԱՆ ֆրեակատարողական բժշկության կենտրոն «Արմավիր» ստորաբաժանման կողմից, որը չնայած իր բազմաթիվ դիմումներին մինչև օրս չի կազմակերպվել: Իր փոխանցմամբ ունի ողնաշարի գրիծա, դիսկերի մաշվածություն, նյարդի, ստամոքսի խնդիրներ: Ցանկանում է տեղափոխվել բուժման 3-րդ խուց, որտեղ գտնվում է իր եղբայրը, որպեսզի վերջինս կարողանա իր մասին հոգ տանել և խնամել իրեն: Տեղափոխվելու դեպքում դուրս կգա հացադուլից: Գլուրգ խաչատրյանը հայտնել է նաև, որ ընդհանուր մասնաշենք տեղափոխվելու դեպքում իր առողջական վիճակին համապատասխան պայմաններ չկան, օրինակ՝ գուգարան գնալու համար պետք է կֆանստել, ինչը ինքը չի կարող անել ողնաշարում առկա ցավերի պատճառով:

Վերագրյալի հիման վրա առաջարկում ենք

1. Քննարկել Գլուրգ խաչատրյանի ՄՌՏ հետազոտության կազմակերպման հարցը:
2. Քննարկել Գլուրգ խաչատրյանին եղբոր հետ բնակեցնելու հարցը՝ նրա խնամքը հոգալու անհրաժեշտությունից ելնելով:

2. Արթուր Գրիգորյան



Խմբի անդամներին Արթուր Գրիգորյանը հայտնել է, որ հայտարարել է հացադուլ և ջրադուլ, որը կապված է եղել իր քրեական գործի և քրեակատարողական հիմնարկում տրամադրվող բուժապաստարկման հետ: Խմբի անդամներին այցի պահին դուրս էր եկել ջրադուլից: Վերջինս տեղեկացրել է, որ 2022թ. հունիսի 7-ին հետազոտվել է և նշանակվել է համակարգչային տոնոգրաֆիա հետազոտություն, որի կատարման վերաբերյալ որևէ տեղեկատվություն իրեն չի տրամադրվել: Ունի նաև տեսողության հետ կապված խնդիրներ, դեռևս 2022թ-ի մարտին դիմել է օպտիկական ակնոցներ տրամադրելու խնդրանքով, սակայն մինչ օրս որևէ արձագանք չկա: Գտնում է, որ պետք է կատարվի աչքերի վիրահատություն:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք

1. Քննարկել Արթուր Գրիգորյանին համակարգչային տոնոգրաֆիա հետազոտություն իրականացնելու հարցը, ինչպես նաև տրամադրել անհրաժեշտ բուժօգնություն՝ տեսողության խնդիրների վերաբերյալ:

3. Նարեկ Եղիազարյան

Խմբի անդամներին Նարեկ Եղիազարյանը հայտնել է, որ 2022թ-ի մայիսի 24-ից հայտարարել է հացադուլ և ջրադուլ: Դիտորդների այցի պահին ջրադուլից դուրս էր եկել: Խնդիրը կրկին կապված էր բուժապաստարկման հետ, մինչև հացադուլը կռուել է 86 կգ, իսկ այցի պահին 75 կգ էր: Ունի ստեֆերի խնդիր: Ախտորոշվել է ձախ ս/վ-ների վեներոտոմայից հետո ՄԵՆ-ՓԵՆ համակարգով: Աջ ստորին վերջույթի վարիկոզ, մեծ ենթամաշկային երակի և փոքր ենթամաշկային երակի համակարգով: Քրոնիկական երակային անբավարարություն: 2022թ-ի ապրիլի 19-ին վիրահատվել է ֆոդաֆաջիակա հիվանդանոցում: Մեկ ամիս անց դուրս են գրել: Նշանակվել է բուժում՝ դեոքսիտինա՝ 10 օր, վենոկուրսետ՝ 2 ամիս, ս/վ-ների էլաստիկ կոմպրեսի, դիստանցիոն ֆայլ: Քրեակատարողական հիմնարկը դեդորայթ չի տրամադրել, գտնում է, որ իրեն անհրաժեշտ է դուպլեքս հետազոտություն:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք.

1. Նարեկ Եղիազարյանին տրամադրել անհրաժեշտ դեղամիջոցներ և քննարկել դուպլեքս հետազոտության անհրաժեշտության հարցը:

4. Գևորգ Սիմոնյան

Խմբի անդամներին Գևորգ Սիմոնյանը հայտնել է, որ 2022թ-ի մայիսի 25-ից հայտարարել է հացադուլ: Խնդիրը կապված է բժշկական սպասարկման հետ: Մինչ հացադուլը կռուել է 69 կգ, իսկ այցի պահին 57,5 կգ էր: Հայտնել է նաև, որ 2022թ-ի փետրվարի 22-ին նույնպես հայտարարած է եղել հացադուլ, հետագայում դադարեցրել էր այն, քանի որ պահանջը բավարարվել էր և իրեն տեղափոխել են ՀՀ ԱՆ «Դադապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ: 2022թ-ի մայիսի 25-ին տեղափոխել են «Արմավիր» ՔԿՀ: Բժիշկը նշանակել է ՄՌՏ հետազոտություն: Բժշկական փաստաթղթերում իր պնդմամբ դա փոխել են և գրել Համակարգչային տոնոգրաֆիա հետազոտություն: Ունի մի շարք խնդիրներ, 3-րդ կարգի հաճմանդություն: Կարգի հետ համաձայն չէ, գտնում է, որ իրեն 2-րդ կամ 1-ին կարգ է հասնում:



Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք.

1. Քննարկել Գևորգ Սիմոնյանին ՄՌՏ հետազոտություն անցկացնելու հարցը:

5. Լևոն Մկրտչյան

Խմբի անդամներին Լևոն Մկրտչյանը հայտնել է, որ 09.06.2022թ.-ից հայտարարել է հացադուլ, որը կապված է բուժապասարկման հետ: Ունի առողջական մի շարք խնդիրներ՝ մեկ երկամի բացակայություն, սիրտը ստենդարվորված է: Բացի դրանից ինֆարկտ և ինսուլտ է տարել: Մի ֆանի օր առաջ տեղափոխել են «Վաղարշապատ» ԲԿ, որտեղ խորհուրդ են տվել տեղափոխել «Հյերբունի» կրկնակի կորոզաֆիա անցնելու նպատակով: Բժշկական կենտրոնից տեղափոխության համար 20.000 ՀՀ դրամ և հետազոտության համար 30,000 ՀՀ դրամ գումար են պահանջել, որը չի կարողացել վճարել, որից հետո իրեն հետ են բերել ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿԶ: Բժշկի կողմից տրված եզրակալությամբ խորհուրդ է տրվել հետազոտություն անցնել, ֆանի որ նախաինֆարկտային իրավիճակ է եղել:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք.

1. Քննարկել Լևոն Մկրտչյանին անհրաժեշտ հետազոտության կազմակերպելու հարցը:

Բոլոր ազատագրվածները բողոքում էին ՀՀ ԱՆ ֆրեակատարողական բժշկության կենտրոն «Արմավիր» ստորաբաժանման բուժապասարկումից և անձամբ ստորաբաժանման ղեկավար պարոն Գեժոյանից, ֆանի որ նրանք մի ֆանի անգամ դիմումներ են ներկայացրել և անհատական հանդիպում խնդրել, սակայն դիմումներն այդպես էլ անտեսված են մնացել:

Խմբի անդամները փորձել են հարցը քննարկել ՀՀ ԱՆ ֆրեակատարողական բժշկության կենտրոն «Արմավիր» ստորաբաժանման ղեկավարի հետ, սակայն վերջինիս վերաբերմունքը շատ բացասական էր դիտարկների նկատմամբ, ուստի փորձ է արվել խնդիրը քննարկել ֆարտուղարի հետ, վերջինս մեկնաբանել է, թե բոլորն էլ հացադուլ են անում, ֆանի որ ցանկանում են տեղափոխվել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿԶ: Վերջինս հավելել է նաև, որ ստորաբաժանման ղեկավարի պարտականությունների մեջ չի մտնում ազատագրված անձանց հետ ամեն օր անհատական ընդունելություն կազմակերպելը:

Սա հերթական հաշվետվությունն է, որը կապված է ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ «Արմավիր» ստորաբաժանման կողմից տրամադրվող բուժօնառության հետ: Կարն ժամանակահատվածում բազմաթիվ բողոքները վկայում են, որ ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ «Արմավիր» ստորաբաժանման կողմից չի ապահովվում պատշաճ բուժօնառությունը, սվյալ ստորաբաժանումը չի տիրապետում իրավիճակին, չի կարողանում աշխատել ազատագրված անձանց հետ: Գտնում ենք, որ ոչնչոր պատասխանատու կառույցը՝ սվյալ դեպքում ՀՀ արդարադատության նախարարությունը պետք է գործուն միջոցներ ձեռնարկի խնդիրը կարգավորելու ուղղությամբ, հակառակ պարագայում կղիտվի որպես պետության կողմից իր պագիտիվ պարտավորությունների չկատարում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱԿԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԻՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Հարգանքով՝

Խնքի նախագահ

Զարուհի Հովհաննիսյան